

Փոխադրում ներառական մտեցմամբ

Կրթության մեջ փոխադրում նշանակում է, երբ սովորողները կրթության մեկ մակարդակից, կամ մեկ դասարանից կամ մեկ դպրոցից անցում են կատարում հաջորդ մակարդակ, կամ գուգահեռ դասարան կամ մեկ այլ դպրոց: Այն կարող է դժվար ժամանակահատված լինել սովորողների, նրանց ընտանիքների և ուսուցիչների համար: Շատ սովորողներ կրթությունից դուրս են մտնում անմիջապես այդ փուլից հետո կամ որոշ ժամանակ անց, հատկապես եթե նրանք ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, որին համապատասխան պայմանները չեն ապահովվում փոխադրման ժամանակ:

Ի՞նչ դժվարությունների են հանդիպում սովորողները փոխադրման ժամանակ:

Չեմ կարողանում կոմսերոշվել կամ գտնել մատչելի ուղիներ իմ նոր դպրոցում:

Չէի տեսել դպրոցի ներքը մինչև դասերն սկսվելը: Վախենում էի..

Բոլորը կարծում են, որ արդեն մեծ եմ ու պետք է կարողանամ հարմարվել նոր դպրոցում, բայց դեռ վախենում եմ և շփոթվում եմ:

Ինձ նկատողություն են անում նոր ուսուցչուհու կոպտելու համար, բայց չեմ կարողանում հասկանալ, թե ի՞նչ է ուզում, որ անեմ:

Նախկին դպրոցում ուսուցիչներս նախապես պլանավորում էին, թե ինչպես ինձ օգնեն որոշ դասերին: Նոր դպրոցում այդ մասին չգիտեմ: Ամեն ինչ պետք է նորից սկսել պլանավորել: Երանի նախկին ուսուցչուհիս մասնակցեք այդ գործին:

Վախենում եմ, որ չկարողանամ նոր ընկերներ գտնել կամ մասնակցել միջոցառումներին նոր դպրոցում:

Ես արդեն բարձր դասարանում եմ և իմ ծնողներն առաջվա պես ակտիվ չեն շփվում դպրոցի հետ, բայց ես կարիք ունեմ, որ նրանք խոսեն իմ նոր ուսուցիչների հետ, երբ ես խնդիր եմ ունենում:

Ինձ շփոթեցնում է նոր դասացուցակը: Ո՞ր ժամին, որտե՞ղ պետք է լինեմ: Ինձ նախատում են, որ ուշանում եմ:

Նոր դպրոցս շատ հեռու է տանից և դա ինձ վախեցնում է:

Ինձ համար շատ դժվար է փոխադրվելը, քննությունները չեն հարմարեցված իմ կարիքներին:

Սովոր չեմ ծնողներիցս հեռու լինել ամբողջ օրը:

Ուսուցիչներն այս դպրոցում այլ կերպ են վարվում, այլ ձևով են սովորեցնում: Չեմ կարողանում հարմարվել նրանց պահանջներին:



Ուզում եմ մասնագիտական քուլեջ գնալ, բայց չգիտեմ դրանցից որոնք են ներառական հաշմանդամությամբ ունեցողների համար: Դպրոցում ոչ ոք այդ մասին չգիտի:

Ինչպե՞ս է կարելի փոխադրման գործընթացը դարձնել առավել ներառական:

Մասնակապարտեզները, տարրական, հիմնական, ավագ դպրոցներն ու միջին մասնագիտական կրթական հաստատությունները պետք է սերտ աշխատեն սովորողների հետ նախքան այդ փուլը, դրա ընացքում և դրանից հետո:

Ունենալ պատասխանատու, ով կհամակարգի այդ անցումը:

Ստեղծել մեխանիզմներ, որպեսզի նախկին և նոր մասնագետներն ու մանկավարժները փոխանակեն անհրաժեշտ տեղեկություններ սովորողների մասին:

Ապահովել, որպեսզի ԱՌԻՊ-ները լրացվեն և տրամադրվեն սովորողի նոր դպրոցին, ուսուցչին:

Վերապատրաստել անձնակազմին աջակցելու սովորողների հուզական, ֆիզիկական և ուսումնական կարիքները, դպրոցից հեռանալու կամ փոխադրվելու ժամանակ և ապահովել ուղեցույցերով:

Ծնողներին բաժանել տեղեկատվական թերթիկներ՝ ինչ ակնկալել և երկուստեք ինչ անել փոխադրումը հեշտացնելու համար:

Օգնել, որ սովորողներն այցելեն նոր դպրոցը, դասարանը և ծանոթանան միջավայրին, մարդկանց ու պայմաններին՝ նախքան տեղափոխվելը:

Հնարավորություն տալ ուսուցիչներին այցելել նոր սովորողներին տուն՝ ծանոթանալու նրանց կարիքներին և ընտանիքի աջակցության համակարգին:

Մասնակից դարձնել ծնողներին ԱՌԻՊ-ների մշակմանն ու կատարմանը:

Վերանայել ու լրամշակել ավարտական և ընդունելության քննությունները, ընդունելության այլ ընթացակարգերը՝ դարձնելով դրանք մատչելի ու հարմար հաշմանդամություն ունեցող սովորողների համար:

Նպաստել, որ դպրոցներն ունենան բավարար տեղեկատվություն բուհական և միջին մասնագիտական ներառական կրթություն ստանալու տարբերակների մասին:

Ապահովել, որ միջնակարգ, բուհական և միջին մասնագիտական հաստատությունները տրամադրեն մասնագիտական կողմնորոշմանն ուղղված խորհուրդներ ու խրախուսեն հաշմանդամություն ունեցող սովորողներին:

Պաստառը պատրաստվել է EENET-ի կողմից և հիմնված է Հայաստանից «Հույսի կամուրջ» ՀԿ-ի և Մոլդովական «Քայլ առ քայլ» և «Keystone» ՀԿ-ների կողմից Բաց հասարակության հիմնադրամի Վաղ մանկական զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ իրականացված հետազոտության արդյունքների վրա:



Enabling Education Network (EENET)
PO Box 422, Hyde, Cheshire, SK14 9DT
Tel: +44 (0)7929326564, info@eenet.org.uk
www.eenet.org.uk